

ՀՀ ԿՐԹՈՒՐՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՂՈՒԿԱՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ ՎԱՀԱՆԻ

**ԻՇԵՐԻ ԹՈՒՅՆԻ ՖՈՍՖՈԼԻՊԱԶ Ա2 ԵՎ ԴԵԶԻՆՏԵԳՐԻՆՆԵՐԻ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ**

Գ.00.02 – Կենսաֆիզիկա, կենսաինֆորմատիկա մասնագիտությամբ
կենսաբանական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՄԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2022

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РА
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ГУКАСЯН ГЕВОРГ ВАГАНОВИЧ

**БИОФИЗИЧЕСКИЕ АСПЕКТЫ ДЕЙСТВИЯ ФОСФОЛИПАЗ А2 И
ДИЗИНТЕГРИНОВ ЯДА ГАДЮК**

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени
кандидата биологических наук по специальности
03.00.02 – Биофизика, биоинформатика

ЕРЕВАН – 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ կենս. գիտ. դոկտոր Ն.Մ. Այվազյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ կենս. գիտ. դոկտոր, դոցենտ Ա.Պ. Անտոնյան
կենս. գիտ թեկ., դոցենտ Ա.Ա. Հովհաննիսյան

Առաջատար կազմակերպություն՝ Մեչենովի անվան էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի և
կենսաքիմիայի ինստիտուտ, ՌԳԱ,
Սանկտ Պետերբուրգ, ՌԴ

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2022թ. դեկտեմբերի 23-ին ժամը 14⁰⁰-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Կենսաֆիզիկայի 051 մասնագիտական խորհրդի նիստում (0025, Երևան, Ալեք Մանուկյան փող. 1, ԵՊՀ կենսաբանական ֆակուլտետ):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Ատենախոսության սեղմագիրն առաքված է 2022թ. նոյեմբերի 11-ին:

051 մասնագիտական խորհրդի

Գիտական քարտուղար, կ.գ.դ., դոցենտ



Մ.Ա. Փարսադանյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете.

Научный руководитель: доктор биол. наук Н. М. Айвазян

Официальные оппоненты: доктор биол. наук, доцент А.П. Антонян
кандидат биол. наук, доцент А.А. Оганесян

Ведущая организация: Институт эволюционной физиологии и биохимии
имени Сеченова РАН, Санкт Петербург, РФ


Защита диссертации состоится 23-го декабря 2022г. в 14⁰⁰ часов, на заседании Специализированного совета 051 по Биофизике ВАК РА при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1, ЕГУ, биологический факультет).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Ереванского государственного университета.

Автореферат диссертации разослан 11-го ноября 2022г.

Ученый секретарь Специализированного Совета 051.

доктор биол. наук, доцент



М.А. Парсаданян

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: A2 դասի ֆոսֆոլիպազները հանդիսանում են լուծելի ֆերմենտներ և կատալիզում են ֆոսֆոլիպիդների 2 ացիլ խմբի հիդրոլիզը, որի արդյունքում առաջանում են ճարպաթթուներ եվ լիզոֆոսֆոլիպիդներ (Tonello F. & Rigoni M., 2017): Չնայած ֆոսֆոլիպազ A2 լայն տարածում ունի կենդանական աշխարհում և ակտիվ ուսումնասիրվում է, այս ֆերմենտի ազդման մեխանիզմները օրգանիզմում շարունակում են մնալ չբացահայտված: Դրա պատճառն է հանդիսանում ֆերմենտի ձևերի մեծ բազմազանությունը, որը դասակարգում են տարբեր խմբերի՝ ելնելով սպիտակուցների եռաչափ կառուցվածքից, ամինաթթվային կազմից, կատալիտիկ յուրահատկություններից և այլն: Օձի թույները I և II խմբերի ֆոսֆոլիպազ A2 լավ աղբյուր են հանդիսանում: Իրենց առաջնային և երկրորդական կառուցվածքով օձի թույնի ֆոսֆոլիպազ A2 նմանվում են կաթնասունների օրգանիզմում առկա ֆոսֆոլիպազ A2-ին, սակայն դրանց առաջացրած ֆարմակոլոգիական ազդեցությունը խիստ տարբեր է: Հաստատված է, որ Ֆոսֆոլիպազ A2-ները մեծ դեր են խաղում բորբոքային պրոցեսի զարգացման մեջ: Ֆերմենտի ներդրումը կայանում է այդ ռեակցիայի լիպիդային ուղղորդիչների սինթեզի մեկնարկի մեջ, այսպես կոչված, բորբոքման քիմիական մեդիատորների: Առաջանում են, ակտիվանում են կամ մոբիլիզացվում են բորբոքման օջախում, և դրանց հարաբերակցությամբ որոշվում է պաթոլոգիզ պրոցեսի ընթացքի բնույթը: Լիպիդային բնույթի բորբոքման մեդիատորները ներկայացված են ճարպաթթուներով և դրանց ածանցյալներով (պրոստոգլանդիններով, լեյկոտրիններով, թրոմբոքսաններով), ինչպես նաև թրոմբոցիտների ակտիվացման ֆոսֆոլիպիդային ֆակտորով (PAF):

Ի տարբերություն ֆոսֆոլիպազ A2, որի տարատեսակ ձևերը և իզոէնզիմները ուսումնասիրության կենտրոնում են գտնվում 1944 թվականից առ այսօր, դեզինտեգրին թերմինն առաջին անգամ օգտագործվել է 90-ական թվականներին որպես իժերի թույնից տարանջատված ոչ էնզիմատիկ փոքր պրոտեինների անվանում, որոնք ունեն յուրահատուկ կառուցվածքային և ֆունկցիոնալ առանձնահատկություններ (Kini M.R., 2005): Դեզինտեգրինները ճնշում են ինտեգրին-լիզանդ փոխազդեցությունը: Դեզինտեգրինների մեծամասնությունը ցիստեինով հարուստ պեպտիդներ են և ամենակարճ դեզինտեգրինը, որի կազմում կա ընդամենը 41 ամինաթթվային մնացորդ, անջատվել է հենց անդրկովկասյան գյուրգայի թույնից (*Macrovipera lebetina obtusa*) (Cesar P. Et al., 2019): Ինչպես ցույց տվեցին ուսումնասիրություններն, այն ճնշում է ալֆա1/բեթա1 ինտեգրինի կապը կոլագեն 4-ի հետ, ուղղակի կապվելով նրան, այն չի ճնշում այլ ինտեգրիններ և խիստ սպեցիֆիկ է: Արգելակելով բջիջների կապը միայնաց հետ՝ օբտուսատինը հանդիսանում է անգիոզենեզը խանգարող միացություն և, ըստ *in vivo* փորձերի, կարող է դադարեցնել արագընթաց քաղցկեղի բջիջների պրոլիֆերացիան (Ghazaryan N. Et al., 2019):

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները: Ներկայացվող հետազոտության նպատակն է հանդիսացել բազմակողմանի ուսումնասիրել դեղաբանական հետաքրքրություն ներկայացնող կովկասյան գյուրգայի թույնի (*Macrovipera lebetina*

obtusa, MLO) առանձին և առավել ակտիվ բաղադրիչների կառուցվածքաֆունկցիոնալ առանձնահատկությունները՝ համեմատելով տվյալ դասերի նյութերի այլ ներկայացուցիչների կենսաաֆիզիկական հատկությունների հետ: Գնահատել թույնի բաղադրիչների սիներգիկ փոխազդեցության աստիճանը, այդ թվում նաև նորագույն սերնդի նանոմասնիկների հետ փոխազդեցության ժամանակ՝ ընկալելով վերջիններին որպես օրգանիզմում դեղամիջոցների թիրախային տեղափոխման կրիչ: Առավելագույն չափով հետազոտել նշված կենսաբանորեն ակտիվ մոլեկուլների կառուցվածք-ֆունկցիա կապի մեխանիզմները, որոնց շնորհիվ դրանք խիստ յուրահատուկ ազդեցություն են ունենում կենդանի հյուսվածքների վրա:

Հետազոտության նպատակի իրականացման համար սահմանվել են հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել կովկասյան գյուրգայի թույնի և կաթնատունների ենթաստամոքսային գեղձի ֆոսֆոլիպազ Ա2-ի կոնֆորմացիաների փոփոխությունների՝ նանոմասնիկների հետ փոխազդեցության ժամանակ:
2. Ուսումնասիրել Էրիթրոցիտների ստվերների և լիպոսոմների վրա ֆոսֆոլիպազ Ա2-ի տարբեր իզոֆորմների մեմբրանոթրոպ ազդեցությունը՝ ներառյալ դրանց ազդեցությունը ԱԵՖ-ազային ակտիվության վրա:
3. Գնահատել ֆոսֆոլիպազ Ա2-ի տարատեսակների ակտիվությունը և երկրորդային կառուցվածքի յուրահատկությունները կենսաաֆիզիկական մեթոդներով:
4. Բացահայտել կովկասյան գյուրգայի թույնի և այլ թույներից անջատված ֆոսֆոլիպազ Ա2-ի տարբեր իզոֆորմների սիներգիզմի աստիճանը մոդելային թաղանթներում:
5. Որոշել տարատեսակ դեզինտեգրինների թաղանթների հետ կապման կինետիկ պատկերը՝ որոշակի ինտեգրինների հետ փոխազդեցության ժամանակ:
6. Գնահատել դեզինտեգրինների հակաադիեզինոն հատկությունները տարբեր քջջային համակարգերում:

Աշխատանքի գիտական նորույթն ու գիտագործնական նշանակությունը:

Ֆոսֆոլիպազ Ա2-ի հետազոտությունների հետաքրքրությունը կապված է այս ֆերմենտի՝ արախիդոնանթթվի մետաբոլիզմում ունեցած դերով: Պոլիենային ճարպաթթուները՝ ներառյալ արախիդոնաթթուն, մեծացնում են անոթային թափանցելիությունը, հրահրում են թրոմբոցիտների ագրեգացիա, ցուցաբերում են վազոակտիվ գործառույթ: Ֆոսֆոլիպազային հիդրոլիզի ռեակցիայի այլ պրոդուկտներ են լիզոֆոսֆոլիպիդները, որոնք օժտված են արտահայտված ցիտոտոկսիկությամբ և դետերգենտ հատկություններով: Այսպիսի միացությունները հայտնաբերվում են այնպիսի հիվանդությունների ժամանակ, ինչպիսին խոլեցիստիտն է, միոկարդի ինֆարկտը, կատարակտը, պտորիազը և այլն: Եթե ճարպաթթուն ֆոսֆատիդիլխոլինից տարանջատվում է 1-Օ-ալկիլային ձևի, առաջացած ֆոսֆոլիպիդը հանդես է գալիս որպես նախանյութ PAF-ի համար, որը բորբոքման, ալերգիկ ռեակցիայի, սեպտիկ շոկի և ասթմատիկ վիճակի մեղիատոր է: Նմանատիպ միջնորդված ազդեցության մեխանիզմների ուսումնասիրությունն ակնհայտ

հետաքրքրություն է ներկայացնում այսպես կոչված “spreading” էֆեկտի և սիներգիզմի տեսության բնագավառում հիմնարար պարզաբանումներ կատարելու համար:

Սակայն տվյալ ուսումնասիրություններն ունեն նաև ուղղակի կիրառական նշանակություն, քանի որ վկայում են, որ օձի թույնի ակտիվ բաղադրամասերը կարող են ունենալ դրական ազդեցություն ինչպես արագ զարգացող քաղցկեղների տարբեր տիպերի (մասնավորապես՝ սարկոմաների), այնպես էլ բազմաթիվ այլ (մասնավորապես՝ բորբոքային) հիվանդությունների կասեցման գործում: Այս սպիտակուցներից շատերն այսօր կարող են դառնալ դեղագործության նոր, ժամանակակից ուղղության զգալի մաս: Այսպիսով, նշված հետազոտությունն ակնհայտ գիտագործնական արժեք է ներկայացնում, այն է՝ Հայաստանի էնդեմիկ հերպետոֆաունային յուրահատուկ կենսաբանական ակտիվ նյութերի հնարավոր հակաուռուցքային և հականեյրոդեգեներատիվ հատկությունների բացահայտումը:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներն են.

1. Ե՛վ օբտուսատինը, և՛ ֆոսֆոլիպազ Ա2 օժտված են յուրահատուկ հատկություններով, որոնք՝ երկրորդային կառուցվածքի աննշան փոփոխության արդյունքում կարող են հանդիսանալ ակտիվ ֆարմակոլոգիական ռեագենտ:
2. Ֆոսֆոլիպազ Ա2-ի իզոֆորմների կառուցվածքային նմանությունը և խիստ սիներգիզմը այն դարձնում էլ նանոմասնիկների հետ համալիր ազդման դեղորայքի հաջող նախատիպ:
3. Մոդելային փորձերում օբտուսատինը և կովկասյան գյուրգայի թույնը ֆոսֆոլիպազ Ա2 ցուցաբերում են տարբեր մեխանիզմներով պայմանավորված մեմբրանոթրոպ հատկություններ՝ ինչպես սուպրամոլեկուլյար, այնպես և հյուսվածքային մակարդակում:
4. Կովկասյան գյուրգայի թույնի բաղադրամասերը օժտված են ախտադեղագործական ակտիվությամբ և կարող են ցուցաբերել օնկոստատիկ հատկություններ ուռուցքների բջջային մոդելներում:

Աշխատանքի փորձարկումը և հրապարակումները:

Ատենախոսության արդյունքները ներկայացվել են տարբեր սեմինարներում և միջազգային գիտաժողովներում: Հրատարակված են թեմայի հետ առնչվող 17 աշխատանք, որոնցից 6 հոդված և 11 թեզիս:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսության ծավալը կազմում է 119 էջ: Այն բաղկացած է հետևյալ գլուխներից՝ ներածությունից, գրական ակնարկից (Գլուխ 1), փորձարարական մասից (Գլուխ 2), արդյունքներից և դրանց քննարկումից (Գլուխ 3), ամփոփումից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից (ընդհանուր 112 աղբյուր): Աշխատանքը պարունակում է 5 աղյուսակ և 48 նկար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԸ

2.2.1 Ֆլուորեսցենսային սպեկտրների գրանցումը: Նմուշների ֆլուորեսցենսային սպեկտրների գրանցումը իրականացվել է Jasco FP-6300 (Ճապոնիա) սպեկտրոֆլուորիմետրի միջոցով՝ 3 մմ օպտիկական հաստությամբ քվարցե կյուվետում: Ճեղքի լայնությունը գրգռման և լուսարձակումը գրանցելու միջև կազմել է 10 նմ: Սպիտակուցների սեփական ֆլուորեսցենցիայի գրգռումը տեղի է ունեցել $\lambda=270$ նմ ալիքի երկարության տակ, իսկ ֆլուորեսցենցիայի սպեկտրների գրանցումը 320-360 նմ ալիքների երկարության միջակայքում:

2.2.2 «Ձետա» պոտենցիալի չափումը: «Ձետա» պոտենցիալի չափումը կատարվել է Zetasizer Nano 2000 անալիզատորի օգնությամբ (Մավվերն, Միացյալ Թագավորություն) 10 մմ օպտիկական հաստությամբ քվարցե կյուվետում: Օգտագործելով լույսի դինամիկ ցրումը, հնարավոր է չափել չափսը, մակերևութային լիցքը, մասնիկների մոլեկուլային մասան, դրանց էլեկտրոֆորետիկ շարժունությունը, ինչպես նաև՝ իրականացնել նմուշների ավտոմատ pH-տիրում և իոնային ուժի ավտոմատացված փոփոխում: Մասնիկների կախույթը տեղադրվում է էլեկտրական դաշտում, որի ազդեցության տակ նրանք շարժվում են իրենց «ձետա» պոտենցիալից կախված արագությամբ, որը չափվում է M3-PALS արտոնագրված տեխնոլոգիայի միջոցով (լույսի ցրումը փուլային վերլուծությամբ)՝ հաշվարկելով «ձետա» պոտենցիալը և դրա բաշխումը:

2.2.3 Միկրովայրկյանային ֆոսֆորեսցենցիայի մարման կինետիկայի գրանցում և վերլուծություն: Ֆոսֆորեսցենցիայի մարման կինետիկայի չափումն իրականացվել է Բելառուսի ԳԱԱ Բ. Ի. Ստեպանովայի անվան ֆիզիկայի ինստիտուտի ատոմային և մոլեկուլային կառույցների ֆոտոնիկայի կենտրոնում ավտոմատացված լազերային սպեկտրոմետրով, որը թույլ է տալիս գրանցել լուսարձակման գրանցման տարբեր երկարությամբ ալիքների լյումինեսցենցիայի կինետիկան, ինչպես նաև լուսարձակման մարման փուլում ակնթարթային լյումինեսցենցիայի սպեկտրները՝ միկրովայրկյանային տիրույթում:

2.2.4 Ֆոսֆոլիպազ A2-ի երկրորդային կառուցվածքի ուսումնասիրությունը նանոմասնիկների հետ փոխազդեցության ժամանակ շրջանային դիքրոիզմի մեթոդով: Ֆոսֆոլիպազ A2-ի շրջանաձև դիքրոիզմի սպեկտրի չափումներն իրականացվել են Esca 815 CD (Ճապոնիա) սպեկտրոֆոտոմետրի օգնությամբ, քվարցային կյուվետում՝ 3 մմ օպտիկական ուղիով: Շրջանաձև դիքրոիզմի սպեկտրների չափումն իրականացվել է 195 նմ-ից մինչև 260 նմ ալիքի երկարության տիրույթում:

2.2.5. Ֆոսֆոլիպիդների անջատումը և հսկա միալամել վեզիկուլների ստացումը: Ֆոսֆոլիպիդների ընդհանուր ֆրակցիան ստանում են խոշոր եղջերավոր անասունի ուղեղից Մյուլերի մեթոդով քլորոֆորմ/մեթանոլային 0.2 մգ/մլ խտության լուծույթում (1:2 մույար հարաբերությամբ): Հետագայում քլորոֆորմ/մեթանոլային լուծույթից

ագատվելու համար օգտագործվել է վակուումային պոմպ: Վեզիկուլների պատրաստման համար կիրառվել է Անգելովայի և Դիմիտրովի կողմից առաջարկված էլեկտրոֆորմացիոն մեթոդը:

2.2.6. Էրիթրոցիտների ստվերների ստացումը: Արյան նմուշները վերցնում են հատուկ փորձանոթներով (հեպարինացված, 4% 20G; Viggo-Spectramed, Swindon, UK): Էրիթրոցիտների թաղանթները ստացվել են ըստ Դոջի, Միտչլի և Հանսհանի մեթոդի: Ստացված նմուշները օգտագործվել են Լոուրիի մեթոդով սպիտակուցի որոշման, մանրադիտման և ԱԵՖազային ակտիվության դիտարկման համար:

2.2.7. (Na⁺, K⁺)- և (Ca²⁺, Mg²⁺)-ԱԵՖազային ակտիվության որոշում: Na⁺/K⁺ և Ca²⁺/Mg²⁺ ԱԵՖազային ակտիվության որոշումն իրականացվել է Հեսկեթի մեթոդով: Na⁺/K⁺-ական ԱԵՖազի ակտիվությունը որոշելու համար օգտագործվել է 2 մՄ ուաբաին: Ակտիվությունը հաշվարկվել է ուաբաինի առկայության և բացակայության ժամանակ արժեքների տարբերությամբ: Ca²⁺/Mg²⁺-ական ԱԵՖազայի ակտիվությունը որոշվել է ընդհանուր և Mg²⁺-ԱԵՖազային ակտիվության տարբերությամբ, որից հետո Ֆիսկե և Սուբառոույի մոդիֆիկացված մեթոդով որոշվել է անջատված անօրգանական ֆոսֆորի քանակը: Ֆերմենտի ակտիվությունը արտահայտված է *մկմոլ/Փլ/մկգ սպիտ/րոպե*:

2.2.8. Ֆլուորեսցենտային թաղանթային զոնդերի մեթոդ և GP/3wGP առժեքների հաշվարկում: Լիպիդների փուլային վիճակը պեպտիդների կապման տեղամասերում գնահատվում է ՊԼՈՂԱՆ-ի (6-պրոպիոնիլ 1-2-(դի մեթիլ ամինո) նավթալեն) ավելացումով, որը հիմնականում ներդրվում է հեղուկ միջավայրում: Մյուս զոնդը՝ ԼԱՈՒԴԱՆը (6-լաուրո-1-2-(դի մեթիլ ամինո)նավթալեն), կարող է տեղեկատվություն տալ լիպիդային երկշերտի մեջ ներթափանցած ջրի մասին, ինչը նույնպես թույլ է տալիս գնահատել թաղանթի միկրոմածուցիկությունը: Թաղանթում PLA2-ի կողմից բևեռայնության փոփոխությունները հայտնաբերելու համար դրանք սկզբում լուծել են դիմեթիլսուլֆօքսիդում (ԴՄՍՕ), այնուհետև ավելացրել լիպոսոմներին, զոնդ-լիպիդ մոյլար հարաբերակցությունը՝ 1:10 000, օրգանական լուծիչի կոնցենտրացիան պահելով ցածր: Ֆլուորեսցենցիայի սպեկտրները ստացվել են Varian Eclipse սպեկտրֆլյուրոմետրով, ԼԱՈՒԴԱՆի և ՊԼՈՂԱՆի գրգռման ալիքի երկարությունը ֆիքսվել է 340-360 նմ: Թաղանթի բևեռայնության ավելի հստակ պատկեր ունենալու համար օգտագործվել է բևեռացվածության ընդհանրացված ֆունկցիա (GP): GP-ն հաշվարկվել է որպես

$$GP = (I_{440} - I_{490}) / (I_{440} + I_{490}),$$

որտեղ I₄₄₀-ը և I₄₉₀-ը համապատասխանաբար կապույտ և կանաչ լուսարձակումների ինտենսիվություններն են: ՊԼՈՂԱՆի դեպքում ավելի չզգրիտ GP առժեքներ կարելի է ստանալ երեք կետով լուսարձակման գրանցման պարագայում (այսպես կոչված՝ 3wGP մեթոդ, I₁ = 420 նմ, I₂ = 480 նմ, I₃ = 530 նմ), որը թույլ է տալիս ավելի հստակ տարանջատել ՊԼՈՂԱՆ-ի տարբեր միկրոմիջավայրում մաքսիմումները և հետևաբար, ավելի նուրբ անալիզի ենթարկել թաղանթների վիճակից կախվածությունը:

2.2.9. Մակերեսային ակուստիկ ալիքների մեթոդ: Ֆիքսված հաճախականությամբ լայնակի ձայնային ալիքները գեներացվում են տակդիրի պլեգոլեկտրիկ նյութում և շարժվում են չիպի մակերեսի վրա երկայնությամբ (SAW Instruments, Գերմանիա): Շարժական փուլը (բուֆեր) ընթանում է չիպի պինդ փուլի վրայով, որի ընթացքում կախված քաշի և նյութի մակերևութից կախված կոնֆիգուրացիայի փոփոխությունից, փոխվում են նաև տատանումների առանձնահատկությունները: Էրիթրոցիտների ստվերները և լիպոսոմները ֆիքսվում են CH₃-SAW-ի մակերեսին (ոչ յուրահատուկ կապում, դրական լիցքավորված մակերևույթ): Շարժական փուլ հանդիսանում են ֆոսֆատային բուֆերում լուծված դեզինտեգրինները (pH 7,4), իսկ հոսքի արագությունն է՝ 20 մկ/րոպե: Խնամակցության որոշման համար կապման կինետիկ հաստատունները հավասարակշռության վիճակում K_D –ն 1:1 կապման մոդելից ելնելով հաշվարկվում են կորի թեքությամբ

$$K_D = k_{off} / k_{on}^{-1},$$

Որտեղ k_{off} (s^{-1})–ն դիսոցացիայի արագության հաստատունն է, իսկ k_{on} ($կոնց. \cdot s^{-1}$)–ն ասոցացիայի արագության հաստատունն է:

2.2.10. Ֆոսֆոլիպազ A2-ի ակտիվության որոշում և Ռաման սպեկտրոսկոպիա: Ֆոսֆոլիպազային ակտիվության հայտնաբերման համար օգտագործվել է cPLA2 Assay Kit (Cayman Chemicals, USA), որի աշխատանքի հիմքում ընկած է ֆոսֆոլիպազ A2-ի ունակությունը հիդրոլիզել առախիդոնոլի-թիո-ֆոսֆատիդիլալի սինթետիկ սուբստրատի sn-2 դիրքում կապը՝ առաջացնելով ազատ թիոլ, որը կարելի է հայտնաբերել DTNB (5,5'-dithio-bis(2-nitrobenzoic acid), այն է Էլմանի ռեագենտի միջոցով: Ռաման սպեկտրոսկոպիայի տվյալները գրանցվել են HoribaXploRa PLUS (Ֆրանսիա) կոնֆոկալ ռաման մանրադիտակի միջոցով: Չափումների համար օգտագործվել է ինֆրակարմիր լազերը (785նմ)՝ նմուշների սեփական լյումինեսցենցիայից խուսափելու նպատակով, կիրառվել է մեկ կետում չափման մեթոդը:

2.2.11. Փորձարարական տվյալների վիճակագրական մշակում: Արդյունքների մշակումն իրականացվել է մաթեմատիկական վարիացիոն վիճակագրության մեթոդներով՝ այն է միջին «± SEM» տեսքով, սխալը որոշելու համար օգտագործվել է Ստյուդենտի չափանիշը, $p < 0,95$ -ի կանխորոշված վստահելի հավանականության դեպքում: Որոշ փորձարարական շարքերի համար միջին արժեքների տարբերության նշանակությունը գնահատվել է ANOVA-ի օգնությամբ, զուգորդված Բոնֆերրոնի թեստով, երբ տարբեր փորձարարական խմբեր համեմատվել են ստուգիչի հետ: $P < 0.05$ մեծությունը համարվում է հավաստի: Փորձարարական տվյալների որոշ շարքեր նպատակահիմար ենք գտել նաև մշակել GraphPad Software (USA, www.graphpad.com) միջոցով:

ԱՐԴՑՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ







Ֆլուորեսցենցիայի մեթոդով MLO ֆոսֆոլիպազ A2-ի կոնֆորմացիաների փոփոխությունների ուսումնասիրությունը՝ նանոմասնիկների հետ փոխազդեցության ժամանակ

Փորձերի ընթացքում չափվել են Անդրկովկասյան գյուրգայի թույնից ստացված ֆոսֆոլիպազ A2 ֆլուորեսցենցիայի սպեկտրները՝ երրորդ սերնդի AE2G3 ֆոսֆորային դենդրիմերների, երկրորդ սերնդի jq153 ֆոսֆոր պարունակող անֆիֆիլ դենդրոնների, երկրորդ սերնդի BDAB27 արծաթե նանոմասնիկների հետ փոխազդեցություններից առաջ և հետո: BDAB27 ունի-NMe3Cl և-PEG ֆունկցիոնալ խմբեր: Հարկ է նշել, որ տվյալ մասնիկները չունեն սեփական ֆլուորեսցենցիա, հետևաբար դրանց կոնցենտրացիոն կախվածությունը անդրկովկասյան գյուրգայի ֆոսֆոլիպազ A2-ի ֆլուորեսցենցիայի ինտենսիվության փոփոխության հետ բացատրվում է բացառապես փոխազդեցության խորությամբ և ուժգնությամբ (Նկար 1):

Փորցերի իրականացման արդյունքում ցույց է տրված, որ անդրկովկասյան գյուրգա *Macrovipera lebetina obtusa*-ի և ցլի ենթաստամոքսային գեղձի թույնից ae2g3 ֆոսֆոր դենդրիմերների, jq153 ամֆիֆիլային դենդրոնների և BDAB27 արծաթե նանոմասնիկների փոխազդեցությունը հանգեցնում է սպիտակուցների կոնֆորմացիոն վիճակի փոփոխության՝ քրոմոֆորների սպիտակուցների հիդրոֆորային շրջակայք թողափոխմամբ: Պարզվել է, որ A2 ֆոսֆոլիպազի ինկուբացիան՝ դենդրիմերների ae2g3 նանոմասնիկներով, jq153 դենդրոններով, BDAB27 արծաթե նանոմասնիկներով և դեզինտեգրին օբտուսատախինով, հանգեցնում է համալիրների ձևավորմանը: Ընդ որում, ֆոսֆոլիպազ A2-ով և արծաթե նանոմասնիկների BDAB27 լուծույթներով նմուշներն աչքի են ընկնում մոնոդիսպերսությամբ:


MLO և ցլի ենթաստամոքսային ֆոսֆոլիպազ A2-ի կոնֆորմացիաների փոփոխությունների համեմատական վերլուծությունը՝ նանոմասնիկների հետ փոխազդեցության ժամանակ

Ցլի ենթաստամոքսային գեղձի Ֆոսֆոլիպազ A2-ի փոխազդեցությունը AE2G3 դենդրիմերի հետ հետազոտվել է 0.8–25.0 մկգ/մլ կոնցենտրացիաների միջակայքում, jq153 դենդրիմերի հետ 3.0–150,0 մկգ/մլ կոնցենտրացիաների միջակայքում, BDAB27 արծաթե նանոմասնիկների 1,0–30,0 մկգ/մլ կոնցենտրացիաների միջակայքում: Նկար 2-ը ցույց է տալիս, որ սպիտակուցների Ֆլուորեսցենցիայի սպեկտրի պարամետրերը (սպեկտրի առավելագույն ինտենսիվությունը (I_{max}) և դրան համապատասխան ալիքի երկարությունը (λ_{max}) նանոմասնիկների հետ փոխազդեցությունից առաջ և հետո փոփոխվում են: Այսպես, սպիտակուցին AE2G3 ավելացնելիս, դենդրիմերի կոնցենտրացիայի աճին զուգընթաց նկատվում է ֆլուորեսցենցիայի ինտենսիվության աճ՝ կոնցենտրացիայի ամբողջ հետազոտվող միջակայքում, որի առավելագույն տեղաշարժը կարճալիք շրջանում 340,1±3,7 նմ-ից մինչև 330,4±0,1 նմ է՝ հետազոտվող կոնցենտրացիաների միջակայքում:



Նկար 1. AE2G3 դենդրիմերների և jգ153 սաֆիֆիլ դենդրոնների և BDAB27 արծաթե նանոասսիկների ադրեցությունը անդրկովկասյան գյուրգալի ֆոսֆոլիպազ A2-ի ֆլուորեսցենցիայի ինտենսիվության (A) և ֆլուորեսցենցիայի էմիսիայի պիկերի (B) վրա

($\lambda_{\text{exc}} = 280 \text{ nm}$, $5 \mu\text{g/mL PLA}_2$, *Tris-HCl buffer, pH 8.0*, 25°C):



Նկար 2. Անողիովկապան ցուրդայի և ցլի ենթաստամոքսային գեղձի ֆոսֆոլիպազ A2-ի Ֆլուրեսցենցիայի սպեկտրների ինտենսիվության (վերին շարք) և էլիսիայի պիկերի (ստորին շարք) համեմատական անալիզ՝ AE2G3 դեդորիմերների, յգ 153 ասֆիֆիլ դենդրոնների և BDAB27 արծաթե նանոսանիկների կոնցենտրացիայից կախված:
MLO ֆոսֆոլիպազի A2-ի կոնցենտրացիան այստեղ 50մկգ/մլ, իսկ ցլի ենթաստամոքսային գեղձից ստացված ֆոսֆոլիպազի A2-ի եր 5մկգ/մլ; 0.08U տրիս-HCl բուֆեր; pH 8,0; ֆոսֆոլիպազ A2-ի ինկուբացիայի ժամանակը նանոսանիկների հետ՝ 5ր; $\lambda_{ցրդ}$ =270 նմ; ջերմաստիճանը՝ 25°C:

ֆոսֆոլիպազ A2-ի ֆլուորեսցենցիայի պարամետրերի կախվածությունը միջավայրում յՁ153 դենդրոնների պարունակությունից, նման է AE2G3-ի վերը նշված ազդեցության:


Սպիտակուցի ֆլուորեսցենցիայի ինտենսիվությունը աճում է ինկուբացիայի միջավայրում յՁ153 դենդրոնների պարունակության աճին համընթաց և տեղի է ունենում մաքսիմումի տեղաշարժ կարճալիքային տիրույթ՝ 332,0±0,1 նմ չափով: Սպիտակուցի լուծույթում BDAB27 արծաթե նանոմասնիկների ներմուծման դեպքում կոնցենտրացիաների վերոնշյալ միջակայքում նկատվել է ֆլուորեսցենցիայի ինտենսիվության նվազում և կարճալիքային տիրույթում սպիտակուցների լուսարձակման մաքսիմումի տեղաշարժ՝ մինչև 338,0±0,6 նմ կոնցենտրացիաների հետագոտվող միջակայքում:

Վերլուծելով օձի թույնի ֆոսֆոլիպազի A2-ի ֆլուորեսցենցիայի պարամետրերի փոփոխությունը նանոմասնիկների հետ փոխազդեցության ժամանակ, կարելի է նշել այն փաստը, որ սպիտակուցի ֆլուորեսցենցիայի I_{max} և λ_{max} կախվածության կորերը հաստատուն արժեքի են հասնում նանոմասնիկների ավելի ցածր կոնցենտրացիաների ժամանակ, քան ցլի ենթաստամոքսային գեղձի սպիտակուցի դեպքում: Օբտուսատիների ազդեցության ուսումնասիրությունը ֆոսֆոլիպազի A2-ի կոնֆորմացիաների վրա տրիպտոֆանային ֆլուորեսցենցիայի մեթոդով հնարավոր չդարձավ, քանի որ օբտուսատիների ֆլուորեսցենցիայի ինտենսիվությունը զգալիորեն ավելի մեծ էր, քան ֆոսֆոլիպազի A2-ինը: Այսպիսով, հիմնվելով ստացված տվյալների վրա, կարելի է պնդել այն, որ անդրկովկասյան գյուրզա՝ *Macrovipera lebetina obtusa* օձի թույնից և ցլի ենթաստամոքսային գեղձից ստացված ֆոսֆոլիպազի A2-ի փոխազդեցությունը AE2G3 ֆոսֆորային դենդրիմերների, յՁ153 ֆոսֆոր պարունակող ամֆիֆիլ դենդրենների և BDAB27 արծաթե նանոմասնիկների հետ հանգեցնում է սպիտակուցների կոնֆորմացիոն վիճակի փոփոխություն՝ սպիտակուցների քրոմաֆորների հիդրոֆոր միջավայր տեղափոխմամբ:

ֆոսֆոլիպազ A2-ի ձեռա-պոտենցիայի վերլուծությունը օբտուսատիին դեզինտեգրինի և նանոմասնիկների հետ փոխազդեցության ժամանակ

Ձեռա-պոտենցիայի մեծությունը բնութագրում է նանոմասնիկների մակերեսային գումարային լիցքը: Ինչպես երևում է նկար 3-ից, փորձարկվող սպիտակուցի ձեռա-պոտենցիայը 0.1-5.0 մկգ/մլ կոնցենտրացիայի միջակայքում օբտուսատինով տիրելու դեպքում, դեզինտեգրինի մինիմալ կոնցենտրացիայի դեպքում նվազում է մինչև -19,4±1,4մՎ, որից հետո հասնում է -15,9±0,65մՎ արժեքի, և պահպանվում է այդ անկարդակում հետագոտվող ամբողջ միջակայքում: Ֆոսֆոլիպազ A2-ի և AE2G3 դենդրիմերների փոխազդեցության ուսումնասիրման ժամանակ սպիտակուցի ձեռա-պոտենցիայը 0,4-23,6 մկգ/մլ միջակայքում դենդրիմերներով տիրելու դեպքում, նանոմասնիկների մինիմալ քանակության պայմաններում, նվազում է մինչև -11,5±2,42 մՎ, որից հետո ձեռա-պոտենցիայի արժեքը հասնում է +11,7±1,25 մՎ-ի՝ 22,0 մկգ/մլ դենդրիմերի պարունակության համապատասխան: Ինչպես ցույց տվեցին հետագոտությունները, ֆոսֆոլիպազ A2-ի և յՁ153 դենդրոնների փոխազդեցության ժամանակ սպիտակուցի մոլեկուլների ձեռա-պոտենցիայի մեծությունը նանոմասնիկների պարունակության տարբեր

կոնցենտրացիաների դեպքում 0,4-20,0 մկգ/մլ միջակայքում սկզբում նվազում է մինչև $-6,5 \pm 3,33$ մՎ, այնուհետև աճում է մինչև $+8,3 \pm 1,2$ մՎ, դենդրոնների պարունակության 22,0 մկգ/մլ-ի հասնելիս:



Նկար 3. AE2G3 դենդրիմեր 1-ի, յգ153 ամֆիֆիլային դենդրոն 2-ի և PEG-իլացված BDAB27 արծաթե նանոմասնիկ 3-ի ազդեցությունը գետա-պոտենցիալի և DLS չափսերի վրա:

BDAB27 արծաթե նանոմասնիկների հետ փոխազդեցության ուսումնասիրման փուլում հետազոտվող սպիտակուցի մոլեկուլների ձեռա-պոտենցիալի մեծությունը նանոմասնիկներով տիտրման ժամանակ 0,25–10,0 մկգ/մլ կոնցենտրացիոն միջակայքում աճում է $-10,9 \pm 2,4$ մՎ-ից մինչև $+8,4 \pm 1,2$ մՎ: Ստացված տվյալների հիման վրա կարելի է եզրակացնել, որ A2 ֆոսֆոլիպազի ինկուբացիան սինթեզված նանոմասնիկներով, հանգեցնում է կոմպլեքսների ձևավորմանը:

Հարկ է նշել, որ Z-average size-ը հիդրոդինամիկական շափորոշիչ է և կարող է կիրառվել միայն դիսպերսիոն միջավայրի մասնիկների, կամ լուծույթում գտնվող մոլեկուլների նկատմամբ: Այս աշխատանքում Size peak պարամետրն արտացոլում է մասնիկների տրամագծի միջին արժեքը, որոնց քանակը միջավայրում գերակշռում է: Մոնոդիսպերս համակարգերի համար Z-Average size-ի և Size peak-ի երկու պարամետրերը կունենան նույն արժեքը: Պոլիդիսպերս համակարգերի դեպքում բաշխման գործառույթը կունենա պիկերի ավելի քան մեկ արժեք, որոնցից յուրաքանչյուրը կունենա տրամագծի իր միջին արժեքը և մասնիկների ընդհանուր թվի տոկոսային հարաբերակցությունը:

Նկարներից երևում է, որ ավելի արտահայտված մոնոդիսպերս համակարգեր են հանդիսանում ֆոսֆոլիպազ A2-ը՝ BDAB27 արծաթե նանոմասնիկների ու օրտուստատինի առկայությամբ լուծույթները, քանի որ Z-Average size և Size peak չափորոշիչներն ունեն ամենամոտիկ արժեքները (Աղյուսակ 1): Նաև պոլիդիսպերսության պարամետրն այս էքսպերիմենտներում չի գերազանցել 20%-ը, ինչը նույնպես թույլ է տալիս բնութագրել համակարգը որպես մոնոդիսպերս: Ֆոսֆոլիպազ A2-ի՝ AE2G3 դենդրիմերներով և յգ153 դենդրոններով ինկուբացիայի

արդյունքում ստացված տվյալները վկայում են այն մասին, որ նմուշում առկա են տարբեր չափերի կոմպլեքսներ: Այդ դեպքում պոլիդիսպերսության չափորոշիչն ուներ 20%-ը գերազանցող արժեք, ինչը թույլ չի տալիս խոսել համակարգի մոնոդիսպերսության մասին:


Աղյուսակ 1: Աշխատանքում օգտագործված լույսի դինամիկ ցրման մեթոդի չափորոշիչները: *Չափորոշիչների արժեքները ստացված են Հիլլի ֆունկցիայով մոդիֆիկացված փորձարարական կորերի ֆիթինգի արդյունքում:*

Նանոմասնիկներ	Z-average size*, նմ	Size peak, նմ	Zeta-potential, մՎ
AE2G3 դենդրիմերներ	4624±353	674±34	+11,7±1,25
jq153 ամֆիֆիլ դենդրոններ	3925±381	853±37	+8,3±1,2
BDAB27 արծաթե նանոմասնիկներ	1012±13	1102±364	+8,4±1,12
Օբտուստատին	1041±17	875±52	-15,9±0,65

Այդպիսով, ստացված տվյալների հիման վրա կարելի է հետևություն անել այն մասին, որ ֆոսֆոլիպազ A2-ի՝ AE2G3 դենդրիմերներով, jq153 դենդրոններով, BDAB27 արծաթե նանոմասնիկներով և օբտուստատին դեզինտեգրիմով ինկուբացիան հանգեցնում է կոմպլեքսների առաջացման: Ինչպես նաև ֆոսֆոլիպազ A2-ի և BDAB27 արծաթե նանոմասնիկների կամ օբտուստատինի խառնուրդներով ինկուբացված նմուշները բնութագրվում են մոնոդիսպերսությամբ:


Շրջանային դիքրոիզմի մեթոդով ֆոսֆոլիպազ A2-ի երկրորդային կառուցվածքի ուսումնասիրությունը օբտուստատին դեզինտեգրինի և նանոմասնիկների հետ փոխազդեցության ժամանակ

Պարուրածև մոլեկուլները ցուցաբերում են շրջանային կրկնակի բեկում կամ օպտիկական ռոտացիա, ինչից էլ շրջակա միջավայրի բեկման ցուցանիշից կախված լույսի թափանցման արագությունը օպտիկական ակտիվ միջավայրում տարբեր կլինի: Այդ իսկ պատճառով, ձախակողմյան բևեռացված շրջանով լույսը կանցնի պարուրածև նմուշով, աջակողմյան բաղադրիչի համեմատ այլ արագությամբ: Երբ պարուրածև մոլեկուլը տարբեր աստիճանով է կլանում ձախակողմյան և աջակողմյան բևեռացված շրջանաձև լույսը, արդյունքում, էլեկտրական դաշտի վեկտորն Էլիպսաձև է լինում: Քանի որ գծային բևեռացված լույսը կարող է լինել հավասար ինտենսիվությամբ ձախակողմյան (ϵ_l) և աջակողմյան (ϵ_r) բևեռացված լույսի սուպերպոզիցիան, շրջանային բևեռացված լույսը անցնում է երկու ճառագայթները բեկող նյութով, շրջանային բևեռացված լույսի ալիքների երկարությունների միջև փուլային հարաբերակցությունը փոփոխվում է և գծային բևեռացված լույսը պտտվում է, իսկ էլիպսաձև բևեռացված լույսի հարթությունը թեքվում է: Էլիպսայնությունը (θ) որպես ալիքի երկարության ֆունկցիա որոշում է ՇԴ սպեկտրը (Նկար 4):



Նկար 4. Օբտուսատինի ՇԴ սպեկտրը (ձախից՝ էլիպտիկության ցուցանիշը, աջից λ_{210} սպեկտրները՝ կոնցենտրացիայից կախված):

Ֆոսֆոլիպազ A2-ի ՇԴ սպեկտրները նանոմասնիկների առկայության և բացակայության ժամանակ գրանցվել են ալիքի երկարության 200–260nm միջակայքում: Ֆոսֆոլիպազ A2-ի ՇԴ սպեկտրում էլիպտիկության ցուցիչի (θ) փոփոխությունը վերլուծել են 209nm մաքսիմալ տիրույթում ($\alpha \rightarrow \pi^*$ անցում): Ցույց է տրվել, որ ֆոսֆոլիպազ A2-ի ինկուբացիան նանոմասնիկների հետ հանգեցնում է θ ցուցիչի նվազման՝ սպեկտրի տվյալ հատվածում (Նկար 5):




Նկար 5. Դենդրիմեր 1-ի, ամֆիֆիլային դենդրոն 2-ի և PEG-իլացված արծաթե նանոմասնիկ 3-ի ազդեցությունը Ֆոսֆոլիպազ A2-ի երկրորդային կառուցվածքի վրա (θ - էլիպտիկություն): (A – շրջանային դիքրոիզմի սպեկտրներ, B - $\lambda = 210 \text{ nm}$ ՝ 5 $\mu\text{g}/\mu\text{l}$ PLA2, Tris * HCl բուֆեր, pH 8.0, 25 °C սպայմաններում):

Այսպես, AE2G3 դենդրիմերների հետ փոխազդեցության ժամանակ θ ցուցիչը նվազել է $-11,5 \pm 0,85 \text{ mdeg}$ -ից (արժեքը ստուգիչում) մինչև $-5,84 \pm 0,52 \text{ mdeg}$, յգ153 դենդրոնների հետ՝ մինչև $-7,45 \pm 1,79 \text{ mdeg}$ արժեքը, BDAB27 արծաթե նանոմասնիկների հետ՝ մինչև $-5,80 \pm 10,63 \text{ mdeg}$, օբտուսատին դեզինստեգրիսի հետ՝ մինչև $-9,53 \pm 0,33 \text{ mdeg}$ արժեքը: θ ցուցիչի վերը նշված արժեքները ստացվել են Հիլլի (Hill) ֆունկցիայով մոդիֆիկացված փորձարարական կորերի ֆիթինգի արդյունքում: Տվյալները ցույց են

տալիս ֆոսֆոլիպազ A2 սպիտակուցի երկրորդային կառուցվածքի փոփոխությունները որպես վերը նշված նանոմասնիկների հետ կոմպլեքսային կառույցների առաջացման արդյունք:

MLO ֆոսֆոլիպազ A2-ի և օբտուսատստինի Ռաման սպեկտրների վերծանումը


